1	Նունե Էվինյան /հինգշաբթի, շաբաթ, նոյեմբերի 1-ից արձակուրդ/	Բժիշկ վարակարան	/0322 /4-86-03, 2-86-03	տուն 2-65-05 բջջ.094048303
2	Անահիտ Թովմասյան /հինգշաբթի, շաբաթ, նոյեմբերի 1-ից/	Բժիշկ վարակարան	4-86-03, 2-86-03	տուն 2-86-43 բջջ.093134576
3	Ասողիկ Ափինյան /երկուշաբթի, չորեքշաբթի	Բժիշկ վարակարան	4-86-03, 2-86-03	տուն 4-03-96 բջջ.094864228
4	Մարտինով Ալեքսանդր /երեքշաբթի, ուրբաթ,կիրակի/	Բժիշկ ռեանիմատոլոգ	4-86-03, 2-86-03	տուն 5-90-75 բջջ.091739570

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
ԷԲՈՒԱՅԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ՝
ԸՍՏ ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԻ

N	Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Հեռախոսահամար	Ըստ շաբաթվա օրերի
1	2	3	4	5
1	Աիդա Բադալյան	Կապան ԲԿ ՓԲԸ ինֆեկցիոն բաժանմունքի վարակաբան	093-631-640	Կապանի ԲԿ ՓԲԸ ք-ի ինֆ բաժ Երկուշաբթից-հինգշաբթի
2	Սվետլանա Գալստյան	Մեղրիի ԲԿ ՓԲԸ ինֆեկցիոն բաժանմունքի վարակաբան	093-644-652	Ուրբաթ-Կիրակի
3	Թերմինա Դանիելյան	Գորիսի ԲԿ ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարակաբան	094-178-444	Գորիսի ԲԿ ՓԲԸ-ի ինֆ . բաժ Երկուշաբթից-Ուրբաթ
4	Էլիանորա Չեքեգյան	Գորիսի ԲԿ ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարակաբան	077-720-627	
5	Մարիա Պետրոսյան Տ	Սիսիանի ԲԿ ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարակաբան	094-361-998	Շաբաթ-Կիրակի
6	Օնիկ Ճաղարյան Սամսոնի ԴԱ332-214 մակնիշի 646 ՍԼ 52 պետհամարանիշ	Գորիս ԲԿ ՓԲԸ-ի Շտապ օգնության վարորդ	094-541-184	
7	Վլադիմիր Միրզոյան	Մեղրիի ԲԿ ՓԲԸ Շտապ օգնության վարորդ	094-002-821	
8	Ռազմիկ Սիմոնյան	Սիսիանի ԲԿ ՓԲԸ-ի Շտապ օգն. Վարորդ Ուազ 388 ՍՍ 54	093-941-601	
9	Հայկ Մկրտչյան	Կապան ԲԿ ՓԲԸ Շտապ օգն. Վարորդ Ֆորդ մակնիշի 872 ՍԼ 51	094-151-563	

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
ԷԲՈՒԱՅԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ՝
ԸՍՏ ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԻ*

N	Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Հեռախոսահամար
1	2	3	4
1	Նարինե Բաբլումյան	վարակաբան	094079634

2	Գոհար Ղազարյան	բուժքույր	093535332
3	Անահիտ Սարիբեկյան	բուժքույր	-
4	Գագիկ Հովհաննիսյան	շտապ օգնության վարորդ	093505900

*Իջևանի ԲԿ-ն ինֆեկցիոն բաժանմունք չունի: Սումատիկ բաժանմունքում կան ինֆեկցիոն մահճակալներ: Արագ արձագանքման թիմն աշխատելու է ըստ անհրաժեշտության

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԷԲՈՒԱՑԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ՝ ԸՍՏ ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԻ

N	Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Հեռախոսահամար
1	2	3	4
1	Արծվի Ավետիսյան	բժիշկ վարակաբան	093 97 97 80 քաղաք.0312 6 68 18
2	Արծվիկ Բաղիշյան	մանկ. բաժանմունքի ավագ բ/ք	099 13 25 03 քաղաք.0312 6 68 18
3	Կարինե Հովհաննիսյան	բժիշկ վարակաբան	098 84 45 24 քաղաք. 0312 .6 47 50
4	Լուսինե Մկրտչյան	մեծ. բաժանմունքի ավագ բ/ք	094 66 97 48 քաղաք.0312 6 47 50
5	Աբրահամ Մինասյան	վարորդ	077 44 56 52
6	Արթուր Զաքարյան	վարորդ	099 88 55 39

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Էբոլայի ներթափանցման և տարածման կանխարգելման և դրա դեմ պայքարի ախտահանման գործընթացների իրականացման նպատակով Երևան քաղաքի արագ արձագանքման թիմի

N	Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Հեռախոսահամար
1	2	3	4
Արագ արձագանքման թիմ 1			
1	Շողիկ Հունանյան	Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի համաճարակաբան	091514045
2	Ադավնի Կարամաթայան	Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի ախտահանող	573590
3	Մավվինա Բարսեղյան	Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի ախտահանող	573590
4	Մկրտիչ Էյջիյան	Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի վարորդ	573590
Արագ արձագանքման թիմ 2			
1	Համլետ Հարթինյան	Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի համաճարակաբան	573700
2	Եվգենիա Այվազյան	Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի ախտահանող	573700
3	Գայանե Մխիթարյան	Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի ախտահանող	573700
4	Անդրանիկ Սահակյան	Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի վարորդ	573700

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

**Էբոլա վիրուսով հարուցված հիվանդության, այդ թվում՝ կասկածելի դեպք
արձանագրման ժամանակ գործողությունների
(հավանական իրավիճակ)**

Զվարթնոց միջազգային օդանավակայանից ահագանգ է եղել ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի պատասխանատու անձին, որՄոսկվա – Երևան չվերթով վայրէջք կատարած ինքնաթիռի ուղևորակազմում ԼԻԲԵՐԻԱՅԻՑ ժամանող ուղևորներից 1-ի մոտ գրանցվել են ջերմություն՝ 38Cև գրիպանման երևույթներ:

ՔԱՅԼ 1. Օդանավակայանի բժշկասանիտարական կետի մասնագետն արագ հազնելով անհատական պաշտպանիչ արտահագուստ հրավիրում է օդանավակայանի բժշկական կազմակերպության շտապ օգնության մեքենան: Այդ ընթացքում կասկածելի ուղևորին օդանավակայանի բժշկասանիտարական կետի մասնագետը նույնպես հազնում է / տրամադրում է անհատական պաշտպանիչ արտահագուստ: Օդանավակայանի բժշկական կազմակերպության շտապ օգնության մեքենան մոտենում է ժամանման սրահի հետնամուտքին՝ բացառելով շփումն օդանավակայանի սպասարկող և այլ անձնակազմի հետ: Կասկածելի հիվանդին օդանավակայանի բժշկական կազմակերպության շտապ օգնության մեքենան, որի անձնակազմը նույնպես անհատական պաշտպանիչ արտահագուստով է, տեղափոխում է օդանավակայանի բժշկասանիտարական կետի մեկուսարան:

ՔԱՅԼ 2. Այդ ժամանակ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի մասնագետի կողմից տեղեկատվությունը, օպերատիվ հիմունքներով, տրամադրվում է ՀՀԱՆ ՀՎԿԱԿ-ի գլխավոր տնօրենին, որից հետո տեղեկացվում է նաև Նորք ինֆեկցիոն հիվանդանոցի պատասխանատուն:

ՔԱՅԼ 3. ՀՀԱՆ ՀՎԿԱԿ-ի գլխավոր տնօրենը տեղեկացնում է ՀՀ առողջապահության նախարարին և այլ շահագրգիռ կառույցներին:

ՔԱՅԼ 4. ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ (15 բույսերի ընթացում, 2 համաճարակաբան, 1 օգնական, 1 վարորդ, 1 ախտահանող, 1 լաբորատոր մասնագետ) կազմված արագ արձագանքման թիմը (այսուհետ՝ **Թիմ**) ժամանում է **Ջվարթնոց միջազգային օդանավակայան:** Օդանավակայան է նաև ժամանում **Նորք ինֆեկցիոն հիվանդանոցի (15 բույսերի ընթացում, 1 վարակաբան, 1 բուժքույր, 1 վարորդ) մասնագետներից** կազմված արագ արձագանքման թիմը:

ՔԱՅԼ 5. Օդանավակայանում թիմը բաժանվում է 2 մասի: Մի մասն աշխատում է հիվանդի հետ և Նորք ինֆեկցիոն հիվանդանոցի մասնագետների հետ: Մյուս մասը տեղեկատվություն է հավաքում ուղևորակազմի մյուս անդամների մասին: Թիմը, որն աշխատում է հիվանդի հետ, համաճարակաբանական վերիուշի հավաքման արդյունքում պարզում է նաև, որ հիվանդը շփում է ունեցել մանաստիպի հիվանդի հետ, որը եղել է Լիբերիայում և Սիերա Լիոնեում:

ՔԱՅԼ 6. Տեղում Թիմի կողմից որոշում է ընդունվում հիվանդին անհապաղ մեկուսացնելու Նորք ինֆեկցիոն հիվանդանոց: Այդ նպատակով Նորք ինֆեկցիոն հիվանդանոցի շտապ օգնության մեքենան, վարակաբանի ուղեկցությամբ հիվանդին տեղափոխում է նշված հիվանդանոցի օբսերվացիոն բաժանմունք, որտեղ վերջիններիս ընդունում է համապատասխան բուժանձնակազմը՝ համապատասխան արտահագուստով: Նախնական գնությունից հետո հիվանդը տեղափոխվում է հիվանդանոցի Մերցելյան մեկուսարան:

ՔԱՅԼ 7. ԵԶՐԱՓԱԿԻԶ ախտահանման են ենթարկվում և օդանավակայանի մեկուսարանը, և օդանավակայանի շտապ օգնության, և Նորք ինֆեկցիոն հիվանդանոցի շտապ օգնության մեքենաները:

ԱՅՆ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱՍՏԸ, ՈՐԸ ՄԱՍՆԱԿՅԵԼ ԵՎ ՄԱՍՆԱԿՅՈՒՄ ԵՆ ԴԵՊՔԻ ՎԱՐՄԱՆ ԱՄԲՈՂԶ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ, ԱՊԱՀՈՎՎՈՒՄ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻԶ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏՈՎ ԵՎ ԻԵՏՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ԳՈՍԿԱՐԵՐՎՈՒՄ ՊՐԱՆԳ ԱՆՉԵՂՈՐԵՆ ԿՐԵԼՈՒ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ:

ՔԱՅԼ 8. ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ արագ արձագանքման թիմի կողմից իրականացվում է ինքնաթիռում եղած ամբողջ ուղևորակազմի (հատկապես այն ուղևորների, ովքեր հիվանդների նստելու շարքից 2 շարք առաջ և հետ են նստած եղել), սպասարկող անձնակազմի անվանացանկի ճշտում և վերջիններիս տվյալներն, ըստ բնակության վայրի, համապատասխան խողովակներով հայտնվում են ամբուլատոր բժշկական կազմակերպություններին՝ հիվանդության գաղտնի շրջանի, այն է՝ 21 օր, ամբողջ

ժամանակաշրջանում, համապատասխան բժշկական հսկողություն սահմանելու համար:

ՔԱՅԼ 9. ՀՎԿԱԿ մասնագետների կողմից հանձնարարական է տրվում ՀՎԿԱԿ համապատասխան մասնաճյուղերին հսկողություն սահմանելու նաև ուղևորների տնային օջախների նկատմամբ՝ հատկապես այն ուղևորների, ովքեր հիվանդների նստելու շարքից 2 շարք առաջ և հետ են նստած եղել:

ՔԱՅԼ 10. Ճշտումների և օդանավակայանի պատասխանատուների կողմից ներկայացված անվանացանկի արդյունքում պարզվում է նաև, որ ամբողջ ուղևորակազմը և սպասարկող անձնակամը գրեթե կազմում է 150 անձ:

ՔԱՅԼ 11. Թիմի հրահանգով Ախտահանման կենտրոնի մասնագետների կողմից, ովքեր արդենիսկ տեղեկացված են եղել օպերատիվ աշխատանքի անցնելու մասին, օդանավը, օդանավից մինչ ուղևորների ժամանման սրահը, օդանավակայանի շտապ օգնության մեքենան, մեկուսարանը ենթարկվում են **ԵԶՐԱՓԱԿԻՉ** ախտահանման:

ՔԱՅԼ 12. **Դեպքի վերաբերյալ իրականացվում է գնահատում՝** համաձայն Միջազգային առողջապահական կանոնների գնահատման գործիքի՝ որպես միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ: Դեպքի մասին անհապաղ տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարություն և համապատասխան շահագրգիռ կառույցներին: Դեպքերի մասին՝ ելնելով հիվանդների ճանապարհորդելու հետագծելիությամբ, տեղեկատվություն է ներկայացվում այն երկրների առողջապահական կառույցներին, որտեղ որ հիվանդները ճանապարհորդելու ընթացքում տարանցիկ կայանել են, հիմնականում:

ՔԱՅԼ 13. Դեպքի մասին, ***որպես հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ,*** անմիջապես ծանուցվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը:

ՔԱՅԼ 14. Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ում արդենիսկ առկա են լաբորատոր ախտորոշման համար համապատասխան ախտորոշիչ թեստ համակարգեր, հիվանդից ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ Ռեֆերենս լաբորատորիայի համապատասխան մասնագետների կողմից, որոնք ևս համապատասխան արտահագուստ են կրում, կատարվում է նմուշառում և, հիմք ընդունելով, ԱՀԿ մոտեցումն այն մասին, որ երկրները պետք է ձեռնպահ մնան տեղում իրականացնելու հիվանդության նկատմամբ հետազոտությունները, համապատասխան դիվանագիտական խողովակներով և պահանջվող նմուշների

վաթեթավորման (հիմք՝ ՀՀ ԱՆ 23.07.2014թ. թիվ 38-Ն հրաման) նմուշներն ուղարկվում են ԱՀԿ ռեֆերենս լաբորատորիա՝ World courier-միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն (ֆինանսավորումն իրականացվում է ԱՀԿ-ի կողմից):

ՔԱՅԼ 15. Թիմն ամենօրյա տեղեկատվություն է ստանում բժշկական հսկողության ներքո գտնվող անձանց առողջական վիճակի մասին:

ՔԱՅԼ 16. Դեպքի արձանագրումից ԵՐԿՈՒ ՕՐ ՀԵՏՈ Թիմին ներկայացված օպերատիվ տեղեկատվության և իրականացված համաճարակաբանական հետազոտության արդյունքում պարզվում է, որ այն ուղևորները, ովքեր գնացել են տուն, և վերջիններիս նկատմամբ կազմակերպվել է բժշկական հսկողություն, հայտնաբերվել են ևս 5 ջերմող հիվանդ, որոնք բնակվում են մարզերում: Վերջինիս մասին զեկուցվում է ՀՀ առողջապահության նախարարին և որոշում է ընդունվում նրանցՏԵՂՈՒՄ՝ ՄԱՐԶԵՐՈՒՄ մարզային նշանակության հիվանդանոցների ինֆեկցիոն բաժանմունքներում (5 անձ, որից 3-ն Արմավիրի մարզում, 2-ը՝ Գեղարքունիքի մարզում), իսկ Երևան քաղաքում՝ Նորք ինֆեկցիոն հիվանդանոցում ՄԵԿՈՒՄԱՑՆԵԼՈՒ համար: Թիմերը մեկնում են նաև նշված մարզեր, հավաստիանալու ներակայացված տեղեկատվության մասին և համաճարակաբանական հետազոտություն կազմակերպելու համար:

ՔԱՅԼ 17. Հիվանդների մոտ, ովքեր արդեն գտնվում են Նորք ինֆեկցիոն հիվանդանոցի Մերցելյան մեկուսարաններում, նկատվում է վիճակի վատացում, որոնք միացել են արդեն արյունազեղման երևույթներ: **Հիվանդը, չնայած իրականացված ախտանշանային և հակավիրուսային բուժմանը,** մահանում է:

ՔԱՅԼ 18. Դիակների թաղման արարողությունն իրականացվում է համապատասխան սանիտարական նորմերի և կանոնների համապատասխան: Մերցելյան մեկուսարանները ենթարկվում են եզրափակիչ ախտահանման:

ՔԱՅԼ 19. Իսկ մարզերում և Երևանում մեկուսացված անձանցվիճակի վատացում չի արձանագրվում:

ՔԱՅԼ 20. Լրատվամիջոցներն, առանց հիմնավորման, բնակչության շրջանում հնչեցնում են արձանագրված դեպքերի մասին տարբերվարկածներ, որն ավելի է բարդացնում իրավիճակը և խուճապի պատճառ է դառնում: Վերջինս բացառելու համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպվում է մամլո ասուլիս և տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվությունը խուճապը բացառելու և

ներկայացնելու **ՃԻՇՏ և ՀԱՄԱՊԱՐՓԱԿ** տեղեկատվություն: Ամենօրյա թարմացված տեղեկատվություն է տեղադրվում ՀՀ ԱՆ պաշտոնական կայքում:

ՔԱՅԼ 21. ՀՀ կառավարություն, դիվանագիտական ներկայացուցչություններին, միջազգային կազմակերպություններին տեղեկատվություն է տրամադրվում իրավիճակի մասին:

ՔԱՅԼ 22. ՀՀ կառավարությունը, գնահատելով իրավիճակը, դիմում է միջազգային կառույցներին՝ մասնագիտական և հումանիտար օգնության համար:

ՔԱՅԼ 23. Նմուշներն ուղարկելուց հետո 3-րդ օրը ԱՀԿ-ից տեղեկավորություն է ստացվում, որ արդենիսկ մահացած հիվանդի մոտ հաստատվել է ԷԲՈԼԱ հիվանդությունը, որն իր գենային հատկություններով նման է Լիբերիայի հիվանդներից անջատված Էբոլա վիրուսի գենային կազմին:

ՔԱՅԼ 24. Ժամանում է ԱՀԿ միջազգային փորձագետների խումբը և աշխատանքները ծավալվում են համատեղ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ մասնագետների հետ:

ՔԱՅԼ 25. Բժշկական հսկողության տակ են գտնվում նաև օդանավակայանի անձնակազմը, ովքեր շփվել են հիվանդների հետ: Առողջության մոնիթորինգի է ենթարկվել բուժանձնակազմը:

ՔԱՅԼ 26. 5 հիվանդի մոտ, ովքեր գտնվել էին հսկողության տակ, վիճակի վատացում չի արձանագրվում, ավելին՝ նրանց մոտ նկատվում է ջերմության անկում և առողջացման դրական տեղաշարժ:

ՔԱՅԼ 27. Բժշկական անձնակազմի շրջանում և օդանավակայանի աշխատակիցների շրջանում նոր դեպքեր չեն արձանագրվում:

2014 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 2502 - Ա հրամանի

**Բժշկասանիտարական հսկիչ կետում Էբոլա վիրուսով հարուցված հիվանդի (կասկածելի) մեկուսացման և հոսպիտալացման
չափանիշներ**

Տենդ և ջերմություն ավելի քան 38,6°C և հավելյալ ախտանիշներ օրինակ՝ գլխացավ, մկանացավ, փսխում, փորլուծություն, որովայնային
ցավ, կամ անհասկանալի հեմոռագիկ տենդ

Կամ

Ճամփորդել է արևմտյան Աֆրիկայով (Գվինեա, Լիբերիա, Նիգերիա, Սենեգալ, Սիերա Լեոնե, Կոնգո և այլ երկրներ, որոնց մասին
առկա է ԱՀԿ-ի տվյալները) որտեղ գրանցվել են **Էբոլա վիրուսով հարուցված հիվանդության դեպքեր**

Եթե առկա է այս գնահատման երկու չափանիշը, ապա՝

ՀԻՎԱՆԴԸ ՊԵՏՔ Է ՄԵԿՈՒՍՍՑՎԻ՝ բացառելով կաթիլային շփման ճանապարհով հիվանդության փոխանցումն՝ հաջորդիվ ապահովելով
արտահերթ հաղորդում ՀՀ ԱՆ Հիվանդությունների Վերահսկան և Կանխարգելման ազգային կենտրոն:

Եթե հիվանդը մեկուսացված չէ

Տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ՝ հեռախոս 527288, 340444

2014 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 2502 - Ա հրամանի

ԴԵՊԻ ԷԲՈԼԱ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՐԿՐՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼՆ ՈՒ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ ՆՎԱԶ ՌԻՍԿԱՅԻՆ Է, ԵԹԵ ԻՐԱԶԵԿ ԵՍ



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼԻՄ



Տեղեկացրեք ավիաընկերության ներկայացուցիչներին, եթե Ձեր ուղեկցի մոտ առկա են Էբոլա վիրուսով հարուցված հիվանդության ախտանշաններ



Եթե Ձեզ մոտ առկա են Էբոլա վիրուսով հարուցված հիվանդության ախտանշաններ, անմիջապես այդ մասին տեղեկացրեք ավիաընկերության ներկայացուցիչներին




տենդ, թուլություն, մկանային ցավ, գլխացավ, որն ուղեկցվում է փսխումով, փորլուծությամբ, արյունահոսությամբ



ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ



Խուսափեք Էբոլա վիրուսով հարուցված հիվանդության ախտանշաններով անձանց հետ անմիջական շփումից



Անմիջապես դիմեք բժշկի, եթե Ձեզ մոտ առկա են Էբոլա վիրուսով հարուցված հիվանդության ախտանշաններ



Օրվա ընթացքում պարբերաբար օգտագործեք ակոհոլ պարունակող ախտահանիչ նյութեր. Եթե ձեռքերը տեսանելի կեղտոտ են լվացվեք օձառով և հոսող ջրով



Ձեռք մի տվեք Էբոլա վիրուսով հարուցված հիվանդությունից մահացածի դիին

ՀԱՎԵԼՎԱԾ 11

ՀՀ առողջապահության նախարարի

2014 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 2502 - Ա հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

**ԲԱՐՁՐ ԱԽՏԱԾՆՈՒԹՅԱՄԲ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (ԷԲՈԼԱ ՎԻՐՈՒՄՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ) ՀԻՎԱՆԴԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
ԿԱՍԿԱԾԵԼԻ, ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ**

ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲԱՐՁՐ ԱՌՏԱԾՆՈՒԹՅԱՄԲ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (ԷԲՈԼԱ ՎԻՐՈՒՍՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ) ՀԻՎԱՆԴԻ, ԱՅՂԻ ԹՎՈՒՄ՝ ԿԱՄԿԱԾԵԼԻ, ԱՐՅԱՆ ՆՍՈՒՇԱՌՈՒՄԸ
ՔԱՅԼ I. ՀԻՎԱՆԴԻ ՀԻՎԱՆԴԱՍԵՆՑԱԿ ՍՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՊԱՏՐԱՍՏԵՔ ԲՈԼՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1 ՊԱՏՐԱՍՏԵՔ ԱՐՅԱՆ ՆՍՈՒՇԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈԼՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ՝


Արյան նմուշառման լաբորատոր փորձանոթներ (ռետինե խցանով ապակե կամ պլաստմասե ստերիլ փորձանոթներներ, վակուումային մեկանգամյա օգտագործման փորձանոթներ, կամ պտուտակավոր խցանով ապակե փորձանոթ): EDTA փորձանոթներն ավելի նախընտրելի են:



Թանգիֆ



Արյան նմուշառման համակարգեր (ասեղ, ներարկիչ, վակուումային մեկանգամյա օգտագործման ներարկիչ բռնակով, ներարկման համակարգ (թիթեռնիկ)



Կպչուն վիրակապ




Սկուտեղ արյան նմուշառման պարագաների համար



Արյան նմուշառման փորձանոթների տեղադրման արկղիկ

40Լարան



Մաշկի հականեխիչ լուծույթ՝ 70% իզոպրոպիլի սպիրտ

Մարկեր, փորձանոթի վրա նշումներ կատարելու




համար

2 ՊԱՏՐԱՍՏԵՔ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Ձեռքերի հիգիենայի համար օգտագործեք ալկոհոլ պարունակող ախտահանիչ լուծույթներ ԿԱՄ


- Հոսող մաքուր ջուր Օճառ Մեկանգամյա օգտագործման սրբիչ



Անհատական պաշտպանիչ միջոցներ՝

Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ

- Մեկ գույգ արյան նմուշառում կատարելու համար
- Մեկ լրացուցիչ գույգ էլ, եթե առաջին գույգը վնասվի



Ոտքերի պաշտպանություն:

Հիվանդանոցում կրեք կարծր ներբանով կամ ռետինե կոշիկներ, *Գյուղական տարածքներում կամ հիվանդի տանը* կրեք կրկնակոշիկ՝ ախտահարված օրգանական արտազատուկների հետ շփումից խուսափելու համար

- Երկարաթև բժշկական արտահագուստ (հիվանդանոցներում) և մեկանգամյա օգտագործման բժշկական արտահագուստ (գյուղական տարածքներում)



- Դեմքի պաշտպանություն:** Դեմքի պաշտպանիչ վահանակ կամ ակնոց և դիմակ



ԿԱՄ




Պարագաներ թափոնների կառավարման համար:

- Կարծր, կափարիչ ունեցող, դիմացկուն, արտահոսք չունեցող կոնտեյներ սրածայր թափոնների համար,
- Երկու պարկ վարակիչ թափոնների համար՝ ախտահանման ենթակա պարագաների և ոչնչացման ենթակա թափոնների համար



3 ԼՐԱՅՐԵՔ ՀԻՎԱՆԴԻ ԲՈԼՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- Արյան նմուշառման փորձանոթի վրա նշեք նմուշառման օրը, հիվանդի անունն ու նույնականացման համարը
- Մի մորացեք լրացնել բոլոր անհրաժեշտ լաբորատոր ձևաթղթերն ու հարցաթերթիկները



- Եթե միևնույն վայրում կամ միևնույն հետազոտության ընթացքում պետք է իրականացվի մի քանի հիվանդի արյան նմուշառում, անհրաժեշտ է ստեղծել ցանկ: Մեկ տողի վրա լրացնել յուրաքանչյուր հիվանդի տվյալները՝ անուն, ազգանուն, նույնականացման համար, սեռ, ծննդյան տարեթիվ, կլինիկական տվյալներ (ախտանշաններ, հիվանդության սկիզբ, նմուշառման օրը, նմուշի տեսակը)

4 ՊԱՏՐԱՍՏԵՔ ՆՄՈՒՇԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ


Փաթեթավորման պլաստմասե կոնտեյներ

Մեկանգամյա օգտագործման (թղթե) սրբիչ

Սառցե պայուսակ (անհրաժեշտության դեպքում)






Նմուշները ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ լաբորատորիա տեղափոխելու համար հետևեք Տեղափոխման ենթակա նմուշի փաթեթավորման հրահանգներին



ՔԱՅԼ II. ԿՐԵՔ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏ

ՄԻ ՄՈՏԵՑԵՔ ՀԻՎԱՆԴԻՆ ԱՌԱՆՑ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏԻ

1 ՀԵՏԵՎԵՔ ՁԵՌՔԵՐԻ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ (ՁԵՌՔԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 40-60 ՎԱՅՐԿՅԱՆ)





Թրջեք ձեռքերը ջրով և օգտագործեք օձառն այնպես, որպեսզի ծածկեք ձեռքերի ողջ մակերեսը

Ձեռքերի ասիերը շփեք իրար

Միահյուսված մատներով աջ ասիով շփեք ձախ ձեռքի արտաքին մակերեսը և հակառակը

Միահյուսված մատներով ձեռքերի ասիերը շփեք իրար



Խաչեք մատներն ու առանց առանձնացնելու շփեք ասիերը

Պտտաձև շարժումներով աջ ասիով շփել ձախ ձեռքի


Պարզաջրել ձեռքերը

Չորացրեք ձեռքերը մեկանգամյա

բթամատը և հակառակը

օգտագործման
անձեռոցիկով

2 ՀԱԳԵՔ ԲԺՇԿԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏԸ




3 ՀԱԳԵՔ ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ
ՎԱՀԱՆԱԿ


ԿԱՍ

ԴԻՄԱԿ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԱԿՆՈՑ



ԵԹԵ ՀԻՎԱՆԴԻ ՍՈՏ ԱՌԿԱ ԵՆ ՎԵՐԻՆ ՇՆՉՈՒՂԻՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՄԱՆ
ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐ, ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՎԱՀԱՆԱԿԻ ՀԵՏ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԿՐԵՔ ՆԱԵՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ԴԻՄԱԿ

4 ՀԱԳԵՔ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌՆՈՑՆԵՐԸ



ՔԱՅԼ III. ՀԻՎԱՆԴԻ ԱՐՅԱՆ ՆՍՈՒՇԱՌՈՒՄ

1 ՊԱՏՐԱՍՏԵՔ ՍԵՆՅԱԿԸ

- ✓ Սրածայր թափոնների համար նախատեսված կարծր, կափարիչ ունեցող, դիմացկուն, արտահոսք չունեցող կոնտեյները և այլ վարակիչ թափոնների համար նախատեսված պարկերը տեղավորեք սենյակում և համոզվեք, որ դրանք պատրաստ են օգտագործման
- ✓ Արյան նմուշառման համար նախատեսված պարագաները տեղավորեք հեշտ հասանելի վայրում



2 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ ՀԻՎԱՆԴԻՆ

- ✓ Ներկայացեք և բացատրեք նմուշառման նպատակը
- ✓ Համոզվեք, որ հիվանդը հենց այն անձն է, որից պետք է արյան նմուշ վերցնել



3 ԸՆՏՐԵԼ ՁԵՌՔԻ ԱՅՆ ՀԱՏՎԱԾԸ, ՈՐՆ ԱՎԵԼԻ ՀԱՐՄԱՐ Է ԱՐՅԱՆ ՆՍՈՒՇԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ (ՆԱԽԸՆՏՐԵԼԻ Է ԱՐՄՆԿԱԾԱԼԻ ՀԱՏՎԱԾԸ)

- ✓ Ընտրեք լավ տեսանելի, ուղիղ և մաքուր երակ
- ✓ Երակը պետք է տեսանելի լինի առանց լարանի կիրառման



4 ՁԵՌՔԻՆ ԼԱՐԱՆ ԿԱՊԵՔ

- ✓ Արյան նմուշառման համար որոշված հատվածից

5 ԽՆԴՐԵՔ ՀԻՎԱՆԴԻՆ ՍԵՂՄԵԼ ՄԱՏՆԵՐԸ (ԲՈՌԻՆՑՔ), ՈՐՊԵՍՁԻ ԵՐԱԿՆ ԱՎԵԼԻ ՏԵՍԱՆԵԼԻ ԴԱՌՆԱ

6 ԱԽՏԱՀԱՆԵՔ ԱՐՅԱՆ ՆՍՈՒՇԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՀԱՏՎԱԾԸ

մոտավորապես 4-5 մատ բարձր



**7 ԲՈՆԱԿՈՎ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱԿՈՒՈՒՄԱՅԻՆ
ՆԵՐԱՐԿԻՉ ԿԻՐԱՌԵԼԻՍ ԱՐՅԱՆ
ՀԱՎԱՔՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԸ ՏԵՂԱԴՐԵՔ
ԲՈՆԱԿԻ ՄԵԶ**

- ✓ Խուսափեք արյան հավաքման խողովակը ներարկիչի բռնակի վրա նշված գծից ավելի խորը մղելուց, այլապես վակուումային գործընթաց չի լինի



**8 ՖԻՔՄԵՔ ԵՐԱԿԸ՝ ԲՈՆԵԼՈՎ ՀԻՎԱՆԴԻ
ՁԵՌՔԸ և ԲԹԱՄԱՏԸ ԴՆԵԼՈՎ
ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ
ՀԱՏՎԱԾԻՑ ՆԵՐՔԵՎ**


- ✓ Ձեռք մի տվեք ախտահանված հատվածը
- ✓ Մատը մի դրեք երակի վրա՝ ուղղորդելու ասեղը

- ✓ Օգտագործեք մաշկի ախտահանիչ կամ ակոհոլ պարունակող լուծույթ
- ✓ Մպասեք 30 վայրկյան մինչև այն չորանա
- ✓ Ձեռք մի տվեք ախտահանված հատվածը



9 ՀԱՎԱՔԵԼ ԱՐՅՈՒՆԸ

- ✓ Ներերակային միջամտությունը կատարեք արագ, 30° անկյան տակ




10 ԵՐԲ ԱՐՅՈՒՆԸ ՀՄԿՈՒՄ Է ՀՈՍԵԼ, ԽՆԴՐԵՔ ՀԻՎԱՆԴԻՆ ԹՈՒԼԱՑՆԵԼ ՄԱՏՆԵՐԸ

11 ԲԱՎԱՐԱՐ ՔԱՆԱԿԻ ԱՐՅՈՒՆ (նվազագույնը՝ 5մլ) ՀԱՎԱՔԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՆԱԽՔԱՆ ԱՍԵՂԻ ՀԵՌԱՑՈՒՄՆ ԱՐՁԱԿԵՔ ԼԱՐԱՆԸ


12 ԶԳՈՒՇՈՐԵՆ ՀԱՆԵՔ ԱՍԵՂԸ

- ✓ Հիվանդին տվեք թանգիֆ կամ բամբակ, որպեսզի վերջինս սեղմի ներերակային միջամտության ենթարկված հատվածը
- ✓ Խնդրեք հիվանդին չծալել ձեռքը






13 ԱՐՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ԽՈՂՈՎԱԿՆ
ԱՌԱՆՁՆԱՑՐԵՔ ԲՈՆԱԿԻՑ ԵՎ
ՏԵՂԱՎՈՐԵՔ ՓՈՐՁԱՆՈԹՆԵՐԻ
ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՐԿՂԻԿՈՒՄ



14 ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԱՍԵՂՆԵՐԸ
ՏԵՂԱՓՈԽԵՔ ԿԱՐԾՐ, ԿԱՓԱՐԻՉ
ՈՒՆԵՑՈՂ, ԴԻՄԱՑԿՈՒՆ, ԱՐՏԱՀՈՍՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ՄԵՋ



**15 ԿԱՆԳՆԵՑՐԵՔ
ԱՐՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆԸ**

- ✓ Մնացեք հիվանդի հետ մինչև արնահոսությունը կդադարի
- ✓ Անհրաժեշտության դեպքում օգտագործեք կաշուն վիրակապ




**16 ՎԱՐԱԿԻՉ ԹԱՓՈՆՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵՔ
ՎԱՐԱԿԻՉ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐԿԻ ՄԵՋ**



ՔԱՅԼ VI. ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇԻ ՏԵՂԱՓՈԽԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

<p>1 ՎԵՐՑՐԵՔ ԱՐՅԱՆ ՓՈՐՁԱՆՈԹԸ ՄԿՈՒՏԵՂԻՑ ԵՎ ՍՐԲԵՔ ԹՂԹԵ ԱՆՁԵՌՈՑԻԿՈՎ</p>	<p>2 ՎԱՐԱԿԻՉ ԹԱՓՈՆՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵՔ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐԿԻ ՄԵՋ</p>	<p>3 ՈՐՊԵՍՁԻ ՓՈՐՁԱՆՈԹԸ ՉՎՆԱՍՎԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐԵՔ ԱՅՆ ԹՂԹԵ ԱՆՁԵՌՈՑԻԿՈՎ</p>
---	--	--




**4 ԽՆԴՐԵՔ ՁԵՐ ՕԳՆԱԿԱՆԻՆ ՄՈՏԵՆԱԼ
ՀԻՎԱՆԴԱՍԵՆՑԱԿԻՆ**

- ✓ Օգնականը պետք է լինի բժշկական ձեռնոցներով
- ✓ Օգնականը պետք է մոտենա Ձեզ՝ ձեռքին ունենալով արտահոսք չունեցող պլաստմասե փաթեթավորման կոնտեյներ
- ✓ Օգնականը չպետք է մտնի հիվանդասենյակ




**5 ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ
ԱՆՁԸ ՊԵՏՔ Է ԱՐՅԱՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ
ՓՈՐՁԱՆՈԹԸ ՏԵՂԱՓՈԽԻ ԱՐՏԱՀՈՍՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՊԼԱՍՏՄԱՍԵ
ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ՄԵՋ**

- ✓ Ձեռնոցներով ձեռք մի տվեք արտահոսք չունեցող պլաստմասե փորձանոթին



**6 ԽՆԴՐԵՔ ՁԵՐ ՕԳՆԱԿԱՆԻՆ
ԱՄՈՒՐ ՓԱԿԵԼ ՊԼԱՍՏՄԱՍԵ
ԱՐՏԱՀՈՍՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ
ԿԱՓԱՐԻՉԸ**



- ԱՅԺՄ ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇԸ ԿԱՐՈՂ Է ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
- ՆՄՈՒՇՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 24 ԺԱՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՀՎԵԼ ՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՒՄ
- ԵԹԵ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՔ ՆՄՈՒՇԸ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՏԵՂԱՓՈԽԵԼ ՆՄՈՒՇԱՌՈՒՄԻՑ 1 ՇԱԲԱԹ ԱՆՑ, ԱՅՆ ՊԵՏՔ Է ՊԱՀԵԼ 0-5 °C ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՒՄ
- ԵԹԵ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՔ ՆՄՈՒՇԸ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՏԵՂԱՓՈԽԵԼ ՆՄՈՒՇԱՌՈՒՄԻՑ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵՎ ՇԱԲԱԹԻՑ, ԱՅՆ ՊԵՏՔ Է ՊԱՀԵԼ -20 °C ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՒՄ (ԿԱՄ -70°C)
- ՀԵՏԵՎԵՔ ՋԵՐՄԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

ՔԱՅԼ V. ՀԱՆԵՔ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏԸ

1 ՀԱՆԵՔ ՁԵՌՆՈՑՆԵՐԸ

Բռնեք և քաշեք առաջին ձեռնոցի արտաքին եզրը



Առաջին ձեռնոցը բռնելով երկրորդ ձեռքում՝ մերկ մատը մտցրեք երկրորդ ձեռնոցի տակ

Հանեք 2րդ ձեռնոցը՝ ստեղծելով ՍպարկՍ 2 ձեռնոցի համար և դրանք նետեք թափոնների ոչնչացման արկղի մեջ



2 ՀԱՆԵՔ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱՀԱԳՈՒՍՏԸ



Արձակեք բժշկական արտահագուստի կապիչները

Բժշկական արտահագուստը հանեք ետնամասից՝ բռնելով օձիքից ու թևերից

Բժշկական արտահագուստը նետեք թափոնների ոչնչացման արկղը



3 ՊԱՀՊԱՆԵՔ ՁԵՌՔԵՐԻ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ձեռքերը լվացեք 40-60 վայրկյան



4 ՀԱՆԵՔ ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ


ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՎԱՀԱՆԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ

ՊԱՐԱԳԱՆԵՐԸ



- ✓ Դեմքի պաշտպանիչ վահանակը հանեք բռնելով հետնամասից
- ✓ Դեմքի պաշտպանիչ վահանակը նետեք վարակիչ թափոնների արկղը՝ ախտահանման նպատակով (կամ, եթե դեմքի պաշտպանիչ վահանակը մեկնագամյա օգտագործման է՝ վարակիչ թափոնների ոչնչացման արկղը)
- ✓ Եթե դեմքի պաշտպանիչ վահանակի հետ միաժամանակ կրում եք նաև դիմակ, հանեք այն՝ բռնելով ներքևի կապիչից և նետեք վարակիչ թափոնների ոչնչացման համար նախատեսված արկղը

ԱԿՆՈՑԻ ԵՎ ԴԻՄԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ



- ✓ Հանեք ակնոցը բռնելով ետնամասից
- ✓ Ակնոցը տեղափոխեք ախտահանման ենթակա վարակիչ թափոնների համար նախատեսված արկղի մեջ (կամ, եթե ակնոցը մեկնագամյա օգտագործման է՝ վարակիչ թափոնների ոչնչացման արկղի մեջ)
- ✓ Դիմակը հանեք ետնամասից՝ բռնելով ներքևի կապիչից և նետեք վարակիչ թափոնների ոչնչացման համար նախատեսված արկղը

5 ՊԱՀՊԱՆԵՔ ՁԵՌՔԵՐԻ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ձեռքերը լվացեք 40-60 վայրկյան



ՀԻՇԵՔ՝

- ✓ Կրկնակի օգտագործման ենթակա պարագաները տեղափոխեք ախտահանման ենթակա վարակիչ թափոնների համար նախատեսված արկղի մեջ

ԵՐԲ ՏԱՐԲԵՐ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇԱՌՈՒՄ ԵՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ.

- ✓ Ձեռնոցները փոխեք յուրաքանչյուր նմուշառումից առաջ
- ✓ Լվացեք ձեռքերը յուրաքանչյուր նմուշառումից հետո
- ✓ ՁԵՌՔԵՐԸ ԼՎԱՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ ՀԱՆԵՔ ՁԵՌՆՈՑՆԵՐԸ
- ✓ ՁԵՌՆՈՑՆԵՐԸ ԿՐԿՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՉԵՆ

